ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Մասնակցային ժողովրդավարություն.
Մեկ գյուղի օրինակ

19 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Հոգա՛ միջոցների մասին, իսկ նպատակներն
իրենք իրենց մասին կհոգան:

Մահաթմա Գանդի

Լույսերը միացնելու ժամանակը

Միջոցներ, թե՞ նպատակներ. երկվություն, որ հետապնդում է անհատներին, հասարակություններին, ազգերին ու քաղաքակրթություններին, իսկ մարդիկ՝ որպես անհատներ, հասարակության և ազգի ներկայացուցիչներ, քաղաքակրթության կրողներ, իրենց ընտրությամբ այդ երկվությանը տալիս են հարաբերականորեն երկարաժամկետ լուծումներ: Այնուհանդերձ երկվությունն այդ հատկապես լուրջ մարտահրավեր է անցումային ժողովրդավարությունների համար, քանզի անցում նշանակում է նոր նպատակների սահմանում և այնպիսի միջոցների փնտրտուք, որոնք թույլ են տալու լավագույնս իրագործել այդ նպատակները:

Մինչ այդ հասարակությունների առաջնորդները խորհրդարաններում և կառավարություններում սահմանում ու վերասահմանում, մշակում ու վերջնամշակում են հանրային նպատակները, անցումային շրջանը ծեծում է յուրաքանչյուր շարքային քաղաքացու դուռն ու հայտնվում շքամուտքին՝ քայքայված ենթակառուցվածքների, ռեսուրսների սակավության, թերի կառավարման, կոռուպցիայի ու աղքատության տեսքով: Մինչ առաջիններն զբաղված են նպատակների մշակման քաղաքական հռետորությամբ, երկրորդներն ուղղակի փորձում են գոյատևել: Թվում է, թե այս երկու համաժամանակյա գործընթացները երբևէ չեն հատվում. առաջիններն անտեղյակ են, թե իրականում որոնք են հանրության կարիքները, վերջինները բոլորովին չեն գնահատում վերնախավերի ջանքերը: Թե ինչ կարելի է ձեռնարկել այստեղ, միանգամայն պարզ է՝ սկսել երկխոսություն:

Երկրում իրականացվող համայնքային զարգացման զանազան ծրագրերում այս պարզ ճշմարտությունը, սակայն, միշտ չէ, որ իր նյութական արտահայտություն է ստանում: Թեև հանրային մասնակցությունը մշտապես դիտվում է որպես կարևոր արժեք, երկխոսություն սկսելու ջանքեր, այնուամենայնիվ, լիարժեք չեն ներդրվում:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնին (ՄԶՄԿ), թերևս, հաջողվեց գտնել համապատասխան ներուժ ու միջոց շարքային քաղաքացիներին իրենց իսկ ապագայի նպատակները սահմանելու գործում վճռական դերակատարում ունենալու գործընթացը մեկնարկելու համար: Իսկ ի՞նչը կարող էր նման նախաձեռնության համար ավելի հարմար սկիզբ հանդիսանալ, քան համայնքային բյուջեի հանրային քննարկումները, մի փաստաթուղթ, որով ըստ էության, սահմանվում է համայնքի սոցիալական քաղաքականությունը:

Այսպիսով, 2005թ. դեկտեմբերին ՄԶՄԿ փորձագիտական խումբն ու Սառնաղբյուրի՝ Հայաստանի հյուսիսում (Շիրակի մարզ) ընկած փոքր մի գյուղի ՏԻՄ առաջնորդները, որոշեցին փորձարկել «անջրպետ կամրջող յուրօրինակ մի միջոց», իմա՝ համայնքի անդամների և ՏԻՄ միջև երկխոսություն սկսելու նպատակով սկզբունքային նոր մոտեցմամբ նոր շունչ ու բովանդակություն հաղորդել հանրային մասնակցության ինստիտուտին՝ կիրառելով նորարարական մի գործիք համահամայնքային համաժամանակյա քննարկումների տեսքով:

Երբեք մի՛ ասա երբեք

Չի կարելի ասել, թե դա հեշտ նախաձեռնություն էր: Թեև տեսականորեն գիտակցվում էր նման նախաձեռնության օգուտները, գործնականում սարսափելի դժվար էր վստահություն կառուցել այնտեղ, որտեղ այն գրեթե գոյություն չուներ:

Համայնքի և ՏԻՄ միջև երկար և հուսահատեցնող լռությունն ուղղակի դրոշմված էր սառնաղբյուրցիների դեմքերին, երբ նրանք մտան քննարկումների սրահ: «Ես այնուամենայնիվ համոզված չեմ, թե մեր ղեկավարներն ականջալուր կլինեն մեր ասածներին», - արտահայտում էին նրանց հայացքները: Ավարտից հետո, երբ նրանք հեռանում էին, նրանց դեմքերը ցնծում էին մտքից. «Դե լավ, գոնե կարողացա ասել այն, ինչ միշտ ցանկանում էի ասել»: Ի վերջո արտահայտվելու հնարավորությունը բավականության զգացում էր առաջացրել, սակայն օդում դեռ զգալի էր անորոշությունը, թե արդյո՞ք իրենց կարծիքը հաշվի կառնվի:

***

Հունիս, 2006թ.: Երբ քարքարոտ ճանապարհից հոգնած վերջապես հասնում ես Սառնաղբյուրի կենտրոն, կեսօրվա լուռ տապի միջից մի ձայն է հասնում ականջիդ՝ շինարարության աղմուկը: Սառնաղբյուրը մարզահրապարակ է կառուցում: Այն նույն մարզահրապարակը, որը կառուցելու օգտին դեռ ձմռանը քվեարկել էին հենց իրենք՝ սառնաղբյուրցիները՝ համայնքի տարեկան բյուջեի կապիտալ ծախսերին նվիրված հանրային քննարկումների սեղանին դրված վեց հնարավոր տարբերակներից ընտրելով հենց այդ մեկը:

«Մենք ենք պետությունը»

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի անդամների կողմից արտահայտված 320 մտքերի, կարծիքների, մտավախությունների ու առաջարկների միջից առանձնանում էր մեկը՝ իր պարզությամբ և խորությամբ. «Մե՛նք ենք պետությունը»:

Նայելով իրականացվող շինարարությանը՝ սկսում ես հավատալ, որ այդ համոզմունքն այսօր իրականություն է Հայաստանի առնվազն մեկ համայնքում, և մնում է միայն հուսալ, որ այն համաճարակի պես կտարածվի ողջ երկրում:

ՄԶՄԿ կողմից տրամադրված միջոցն իրականում արժեք է ներկայացնում Հայաստանի զարգացման առաջնահերթային նպատակներից մեկի՝ *մասնակցային ժողովրդավարության* ապահովման գործընթացում:

Իսկ ո՞րն է հաջորդ քայլը: Ի՞նչ անել, որպեսզի այս միջոցը հանգեցնի այնպիսի մի շրջադարձային կետի, որտեղից հանրային մասնակցությունը անհաղթահարելի «վարակի» նման կհամակի բոլոր համայնքներին և մարդիկ իրականում «կդառնան պետություն»…

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2006թ-ի դեկտեմբերի 4-ին կայացած՝ «Քաղաքացիների մասնակցությունը քաղաքականության մշակման գործընթացին. մեկ օրինակ» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:
Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ: